IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

ՄԵՐ ՄԱՍԻՆ

Էրազմուս+ CBVET 2023 շրջանակներում Եվրահանձնաժողովի կողմից ֆինանսավորվող IMPROVET-AM ծրագիրը ուղղված է Հայաստանի առողջապահական ոլորտում որակավորումների կատարելագործմանը, մասնավորապես ուշադրություն դարձնելով ատամնատեխնիկության, առողջապահական ու անձնական խնամքի ոլորտին: Հմտությունների կատարելագործմանը զուգահեռ՝ ծրագիրը միտված է հայ սովորողների, նրանց ընտանիքների և հանրության մասնագիտական ուղղորդման ծառայությունների զարգացմանը: Ներառելով ժամանակակից ուսուցման մեթոդները, թվային և կանաչ մոտեցումները՝ ծրագիրը նպատակ է հետապնդում կազմել աշխատաշուկայի ներկա և ապագա պահանջներին համապատասխանող կրթական ծրագրեր:

ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ ԻՏԱԼԻԱ ՖՐԱՆՍԻԱ

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

ՌՈՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (SEPR)

ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ (CEPFA)

APRO FORMAZIONE

ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ (GSMC)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ատամնատեխնիկության և առողջապահության ոլորտում ակադեմիական և շարունակական մասնագիտական կրթություն իրականացնելու նպատակով ժամանակակից և նորարարական մոդուլների մշակում
- Ժամանակակից ուսումնական նյութերի և մոտեցումների ներդրում՝ թվային գործիքների ներառմամբ:
- Դասավանդողների, ղեկավար կազմի և օրենսդիր մարմինների կարողությունների հզորացում:
- Կարիերայի ուղղորդման պատասխանատուների զինում նորարարական գործիքներով տարբեր տարիքի շահառուների մասնագիտական ուղղորդման կարիքները բավարարելու համար:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

1. ՄԿՈՒ ոլորտում գերազանցության խթանում. բարելավել և խթանել մասնագիտական կրթությունն ու ուսուցումը Հայաստանում:
2. Համագործակցության խթանում. ամրապնդել ՄԿՈՒ կենտրոնների և ընկերությունների միջև փոխշահավետ համագործակցությունը:
3. Զբաղվածության ցուցանիշի բարձրացում. բարելավել հայ սովորողների ինտեգրումը աշխատաշուկայում՝ համապատասխանեցնելով ՄԿԾ-ները գործատուների կարիքներին:
4. Հմտությունների զարգացում. կատարելագործել մասնագետների հմտությունները և ապահովել դրանց ճանաչումը:
5. Կրթության հասանելիություն. թույլ տալ հայ սովորողներին, ներառյալ հեռավոր և գյուղական համայնքներում բնակվողներին, ստանալ որակյալ ակադեմիական և շարունակական մասնագիտական կրթություն:
6. Մասնագիտական ուղղորդման ծառայությունների բարելավում. բարելավել հայ սովորողների, նրանց ընտանիքների և հանրության մասնագիտական ուղղորդման ծառայությունները:
7. Առողջապահական ոլորտի զարգացում. աջակցել առողջապահական ոլորտի զարգացմանը, մասնավորապես ատամնատեխնիկության, առողջապահական ու անձնական խնամքի ոլորտում որակավորումների կատարելագործմանը թվային ու կանաչ անցումների ինտեգրման միջոցով:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ակնկալվող արդյունքը

- Արտադրություն-կրթություն ամուր կապեր
- Թարմացված և աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մոդուլներ
- ՄԿՈՒ արդիականացում և որակի բարելավում
- Մրցունակ աշխատուժ
- Մասնագիտական ուղղորդման և աջակցման ծառայությունների բարելավում
- Ղեկավարների, դասավանդողների և մասնագետների կարողությունների ու հմտությունների հզորացում

improvetam.eu

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ համընկնեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետի հետ: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն պատասխանատվություն չեն կրում դրանց համար: